

Վաճառի սու կարծիքը (մէջբերուած Պուխարինի կողմէ) (8)։ «Այն իրողութիւնը՝ թէ Հոգեկան կեանքի բնաշրջութիւնը կախուած ունի ֆիզիքական միջավայրէն, ձտացածին եւ անընդունելի կ'ընծայէ այն Հոգեբանական օրէնքները որ իբր թէ կը կանխեն ֆիզիքական կեանքի բոլոր յարաբերութիւնները եւ կը փոխակերպեն օրկանխիղճը՝ իրենց տեղ-Հական նպատակները արտայայտող գործիքի։ Որքան ատեն որ ճարտարաբան Հոգեկան կեանքը իր ամբողջութեան մէջ ճեղի անձանթ կը մնայ, երբ տնոր գոյութեան նկատմամբ՝ թէեւ Հաղուողէպ բայց իրականապէս կան փաստեր, ժխտուծի ոչ ճէկ վճռական արտայայտութիւն չի կրնար Հաճապատականել ճշմարտութեան։ Ո՛վ գիտէ երբեք թէ ձենք այդ Հոգեկան ուժերու աղղեցութեան ներքեւ չենք կատարելապէս։ Մեր յօդուածի վերջին բաժինը

ձեզ պիտի դնէ այդ խորհրդաւոր երեւոյթներու ներկայութեան. ճենք զանոնք չենք շփոթեր ձեր Հոգեբանական կարգ ճը վիճակներու Հետ որ կը ճնխեն ձեր օրկանական անհրաժեշտութիւններէն։ Այս վերջիններն են որ կ'ը կազմեն ինչ որ կը կոչենք ներքին որոշականութիւն (9) (déterminisme)։ Այս ուղղութեամբ ձեռք ձգուած գիտական արդիւնքները տալէ առաջ, Հզանցիկ ակնարկ ճը նետենք ճարտարաբան ազատութեան զարաւոր եւ վիճելի զաղափարին վրայ որու անբաժանելի ճէկ կողմն է այդ որոշականութեան Հարցը։

ՏՕ-ՔՔ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԵՆԵԱՆ

(Մնացեալը յաջորդ բիւով)

(9) Որոշականութիւնը զուս ֆիլիսոփայական գրութիւն մըն է, որ ճարտարաբան կամքին ազատեան գործելու կարողութիւնը կ'ուրանայ եւ մեր գործերուն անսխալական պատճառները կը վերագրէ կամքի զուս եղող ազգակներու։

(8) էջ 93, La Théorie du matérialisme historique, par N. Boukharine. Editions Sociales Internationales, Paris.

Ա Ն Տ Ի Պ Ե Ր Գ Ե Ր Ա Է Յ Ե Ա Դ Ի

Ե Զ Ր Ա Փ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի Դ Ի Մ Ա Յ Օ Տ Ա Ր Հ Ա Յ Ա Զ Գ Ի Ո Ց

Ղահվի յայի սովորած իբխաններ, ժամ կուգայ որ թրուած բան չի գտնել. Փափկութեան մեջըն մոլորուած իբխաններ, կը որոնեն՝ մրեակի բան չի գտնել։

Օսար եւ օսար ճանկասանուր, Իբրեւ սոխակ այլոց բուրասանուր, Հայրենիք մրնաց Հայաստանուր, Ասացի էթ էս չիլամ էլ ո՛վ լայ։

Փարայի պէս յրկայ երայսամոռ բան, Այսօր ձեզ մօտ՝ վաղը կուլի այլոց սան, Շատ հարուսներ դիտել՝ մեռան պարսկական, Օր կուլի որ օսայիկ փոխան չի գտնել։

Թողել եմ ճաղկաւէս դաւս ու սարերս, Ոսկւոյ պէս օղոտողուն հանքի փարերս, Գիտեն լացով պիտի անցնին օրերս, Ասացի էթ էս չիլամ էլ ո՛վ լայ։

Քանի փարան ձեր ձեռիցը չէ փախել, Նրբան ազգի ճանուն իարենե՛ք՝ մի՛ վախել. Եթէ հազար գուռն կամեմա՛ք բախել, Ահեհեհի պէս նօսարաբան չի գտնել։

Ջուլս Մասիսը բսպատու եմ մեզ լալով, Մեկբանկու բարօրութեան յոյս օալով, Բայց մի՛ր սիւր բարացել է յրգալով, Ասացի էթ էս չիլամ էլ ո՛վ լայ։

Արագածը իւր գրրուխը պատռել է,  
Գիշերը ցերեկ արատուելով դազրել է,  
Ջի գորդիս իւր օտար սերը պատրել է,  
Ասացե՛ք երեք ես չիլամ էլ ո՛վ լայ:

Մեզ պիսի վաս որդուց վաս օրը սա է,  
Որքան որ պատեցիցիմ մեր հօրը՝ սա է,  
Սի՛նե՛նՊի իւր եղբարց յորգորը սա է,  
Ասացե՛ք երեք ես չիլամ էլ ո՛վ լայ:

ՍԻՆԵՆՊԻ

Արմաւիրը սեւ հագել ոսից ցրգրուխ,  
Վաղարեապատը հուր շունի, է յո՛վ մուխ,  
Հայասան եղել է խաւար մառախուղ,  
Ասացե՛ք երեք ես չիլամ էլ ո՛վ լայ:

Մ. Խ.— Կովկասեան Հայ աշուղներու եմա-  
նողութեամբ՝ Սէլեազ կեղծանունով այնքան սիրուն  
երգեր գրող Մատաթեանի այս երկու անտիպ էջերը  
գտանք Արամ Անտոնեանի ձեռագիր ձեռն Հաւա-  
քածուին ձեռն:

# Ա Մ Է Ն Ի Ն Չ Ա Ն Ց Ե Ա Լ Ո Ւ Մ

( Զ Ր Ո Յ Ց )

Վառուղ Հնոցի կրակը լուսաւորում էր  
մեծ սենեակի մի մասը, թողնելով միտու-  
թեան մէջ հեռաւոր անկիւնները:

Հնոցի առաջ լայն «վոլտերեան» թիկ-  
նաթոռում նստած է մի կին:

Նա ծեր է, շատ ծեր:

Փոքրիկ, ցամքած, թօշնած երես, ծած-  
կուած բազմաթիւ կնճիռներով, անսխալ,  
խորը կոպերի մէջ թաղուած աչքեր, ուղ-  
ղած կրակին, ձեան նման ճերմակ մազեր,  
որ տեղ տեղ դուրս են եկել գլխի սեւ  
փաթեթոցից, փոքրիկ, տաշած ձեռքեր եւ  
նուրբ, որոնցից մէկը դրած է Հնոցի եր-  
կաթեայ վանդակի վերայ:

Պառաւը անշարժ է. միայն նրա ձեռ-  
քերը անդադար դողում են:

Ի՛նչ է մտածում նա, ո՛ւր են նրա խո-  
հերը...

Հնոցի մարմարի վրայ դրուած ժամա-  
ցույցի միակերպ թիքթիքը կտրում է սեն-

եակի խոր լուռութիւնը. նրան ժամանակ առ  
ժամանակ միանում է Հնոցում ալրուող  
փայտերի շվշվոցը:

Սենեակի դուռը կամաց բացուեցաւ եւ  
արանքում երեւաց մի գլուխ:

— Կարելի՛ է քեզ մօտ, մեծմայր:

Պառաւը կարծես արթնացաւ խոր քնից:

— Գո՛ւն ես, Ասողիկ, մտի՛ր, մտի՛ր:

Օրիորդը ցտակելով մտաւ ներս, չաքց  
մեծմօր ոտքերի տակ, առաւ արեւի մէջ  
նրա դողգոջուն ձեռքը, եւ սկսեց շոյել,  
Համբուրել:

Պառաւը մօտեցրեց Ասողիկի գլուխը  
իր կրծքին, մի քիչ կոացաւ եւ սկսեց շո-  
յել նրա սեպ սեւ մազերը որ գանդուղնե-  
րով թափւում էին նրա ուսերին:

— Մեծմայր, ի՛նչ բերեմ քեզ, կա՛թ  
թէ՛ մ'ածուն:

— Ոչինչ չեմ կամ'նում:

— Չասես, չասես, մի՛թէ կարելի է ո-